ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Տ. Բակլաչյան /----------/
<< -------- >> ----------2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հրազդանի Հովհ. Թումանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոց
2023-2024 ուսումնական տարի
Ի բ դասարան

Դասղեկ՝ Նարինե Ալեքսանյան

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. **Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)**

Դասարանը բաղկացած է 31 սովորողից՝ 16 աղջիկ 15 տղա: Ընդհանուր առմամբ կոլեկտիվը համերաշխ է, մեկուսացված երեխաներ չկան: Սովորողները ակտիվ մասնակցում են խմբային աշխատանքներին, հանդես են բերում խելք, ուժ, հնարամտություն: Նրանք ֆիզիկապես առողջ են, հաճախում են դպրոց միշտ ժամանակին և ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից "անբավարար" աշակերտների հետ աշխատել առանձին, շտկել այդ թերությունները: Սովորողների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողունակություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի , համագործակցություն, փոխօգնություն);

3. <u>ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u>

3.1 **Հոգևոր դաստիարակություն** Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մոտ զարգացնել գեղեցիկը տեսնելու, այն ընկալելու և գնահատելու կարողություն: Համագործակցել երաժշտության և կերպարվեստի ուսուցիչների հետ: Նպաստել մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորմանը:

Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն**

Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Նշել որոշ ֆիդայիների, հերոսների անուններև թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը: Քաղաքացիական պատասխանատվության, արժանապատվության ձևավորում, հարգանք իր երկրի մշակույթի և պատմության հանդեպ:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Կարևորել առողջ ապրելակերպի և ֆիզիկական դաստիարակության դերը մարդու կյանքում: Զարգացնել սպորտի հանդեպ սեր, բարձրացնել մրցակցության ոգին, ձևավորել վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունք:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն** Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը , աշխատավոր մարդը: Մասնակցել դասասենյակի և դպրոցի տարածքի մաքրման աշխատանքներին :

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Ձևավորել բնության հանդեպ հոգատար վերաբերմունք, սովորեցնել պաշտպանել և խնամել շրջապատի բնական ռեսուրսները: Հաճախակի կազմակերպել ծաղիկների տնկում, էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը: Ծանոթացնել բնապահպանական մի քանի խնդիրների, որոնք առկա են իրենց շրջապատում :

4. **<u>Դպրոց-ընտանիք կապը</u>**

Երեխաները պետք է հասկանան ամուր ընտանիքի կարևորությունը, գիտակցեն, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Մշտապես կապ պահպանել ծնողների հետ, նրանց տեղյակ պահել երեխայի ձեռքբերումների և թերացումների մասին: Ծնողներին մշտապես ներգրավել անցկացվող միջոցառումներին:

Առաջին դասարան 30 ժամ, շաբաթական 1 ժամ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

Դաս		*ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՆՅՈՒԹԸ*			Ժամ
1		Կազմակերպչական աշխատանքներ. ա) դասագրքերի բաժանում, տետրերի հավաքում բ) ծանոթացում դպրոցական կարգուկանոնին			1
2		Զրույց՝ §Կրթությունը կարևոր է¦ թեմայով ա) առաջացնել հետաքրքրություն գիտելիքի նկատմամբ բ) պարզել, թե ով ի՞նչ է ուզում դառնալ			1
3	Թեմա 1	**Համագործակցություն**	Վ	§Պատառիկները¦, §Գիրք ենք ստեղծում¦,	1
			Պ	§Մեր բակի պատմությունը¦	
4		Զրույց՝ §Իմ հայրենիքը Հայաստանն է¦ թեմայով			1
5	Թեմա 2	**Արդյունավետ հաղորդակցում**	Վ	§Հեռախոս¦, §Հեռագիր¦, §Մարդ-գրատախտակ¦	1
			Պ	§Քուչոյի ծննդյան օրը¦	
6		Զրույց՝ նվիրված ուսուցիչների օրվան, բացիկների պատրաստում			1
7		ա) աշնանային տրամադրության ստեղծում դասասենյակում: բ) աշնան թեմատիկայով գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցում , երգերի ունկնդրում			1
8	Թեմա 3	**Խնդիրների համատեղ լուծում, որոշումների կայացում**	Վ	§Որոշումների ծառը¦	1
			Պ	§Պարողը¦	
9		ա) դասագրքերի, տետրերի, աշակերտական սեղանների ընդհանուր ստուգում: բ) խաղ՝ §Ով արագ և կոկիկ կդասավորի պայուսակը¦ գ) զրույց՝ §Մաշկի խնամքը¦, §Մաքրությունն առողջություն է¦ թեմայով:			1

10		Զրույց՝ §Երթևեկության կանոնները¦ թեմայով			1
11	Թեմա 4	**Կոնֆլիկտների հաղթահարում**	Վ	§Չեմ ուզում կռվել¦	1
			Պ	§Արի հաշտվենք¦	
12		ա) զրույց՝ §Լինենք քաղաքավարի¦ թեմայով բ) գեղարվեստական ստեղծագործության ընթերցում			1
13		ա) զրույց՝ §Դրսում ձմեռ է¦ թեմայով բ) դասարանում ստեղծել տոնական մթնոլորտ			1
14		ա) զրույց՝§Ամանորյա հրաշքներ¦ թեմայով: բ) մասնակցություն ամանորյա միջոցառումներին			1
2-րդ կիսամյակ					
15		ա) զրույց՝§Սուրբ ծնունդ¦ թեմայով: բ) զրույց՝ նվիրված հայոց բանակի օրվան			1
16	Թեմա 5	**Բանակցություններ**	Վ	Պատմության ընթերցում և քննարկում	1
			Պ	§Կախարդական ծրարը¦	
17	Թեմա 6	**Երեխայի իրավունքներ**	Վ	§Հաճելի է, հաճելի չէ¦	1
			Պ	§Ես իրավունք ունեմ¦	
18		Զրույց՝ «Հեքիաթների աշխարհում» թեմայով ա) քննարկել սիրված հերոսների արարքները բ) ստեղծել հեքիաթ			1
19		ա) Զրույց՝ նվիրված Հ. Թումանյանի ծննդին և գիրք նվիրելու օրվան բ) Զրույց՝§Մեր լեզուն մեր ուժն է¦ թեմայով			1
20	Թեմա	**Սեռային (գենդերային)**	Վ	§Մեր կարծիքով՝ նրանք…¦	

	7	**խնդիրներ**	Պ	§Ուրվական ենք փնտրում¦	1
21		§Տոնդ շնորհավոր, սիրելի՛ մայրիկ¦:			1
22		ա) Զրույց՝ §Աշխատանքը մայրն է ամեն բարիքի¦ թեմայով բ) Գեղարվեստական ստեղծագործության ընթերցում			1
23	Թեմա 8	**Մասնակցություն, ակտիվ քաղաքացիական դիրքորոշում**	Վ	§Սիրում է, չի սիրում¦	1
			Պ	§Ամենասիրուն բակը¦	
24	Թեմա 9	**Շրջակա միջավայր**	Վ	§Կապեր¦	1
			Պ	§Նվերը¦	
25		Զրույց՝ §Պահպանենք բնությունը¦ թեմայով			1
26		Զրույց՝ նվիրված եղեռնի օրվան:			1
27	Թեմա 10	**Հանդուրժողականություն**	Վ	§Ծիածան¦	1
			Պ	§Հնդկացի-հնդկացի խաղանք¦	
28		ա) Զրույց՝§Ու՞մ կուզեի նմանվել¦ թեմայով բ) մայիսյան տոներ			1
29	Թեմա 11	**Միջմշակույթային փոխըմբռնում**	Վ	§Ցուցահանդես¦	1
			Պ	§Ամպիկը¦	
30		Զրույց՝§Ինչպե՞ս եմ ուզում անցկացնել ամառային արձակուրդները¦ թեմայով:			1